**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ**
**ԼՈՒՍԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ**

25.07.2011 թ.

Թիվ 9 - Ն

# ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ կետի պահանջներով համայնքի ավագանին.

## ՈՐՈՇԵՑ`

1. Հավանություն տալ համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմային, ըստ որի առաջարկվում է` համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողամասերից 900 քմ փոխանցել հատուկ նշանակության հողերի կատեգորիա` հակակարկտային գեներատորային կայանների կառուցման նպատակով:
2. Խնդրել ՀՀ Արարատի մարզպետին տալ համապատասխան ընթացք:

Ավագանու անդամներ`

| | | |
|---|---|---|
| 1. | Առաքելյան Գասպար – | կողմ |
| 2. | Առաքելյան Գևորգ - | կողմ |
| 3. | Արզումանյան Ոսկան – | կողմ |
| 4. | Բաղդասարյան Արթուր – | կողմ |
| 5. | Խաչիկյան Վազգեն – | կողմ |
| 6. | Հովհաննիսյան Մանվել - | կողմ |
| 7. | Քեշիշյան Արամայիս – | կողմ |

Լուսառատ համայնքի ղեկավար` Դ. Հակոբյան

Համայնքի ղեկավարի
աշխատակազմի ղեկավար` Գ. Սահակյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ԼՈՒՍԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

25.07.2011 թ.

Թիվ 10-Ն

# ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ 2011 թ. ԲՅՈՒՋԵՅՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով

ՈՐՈՇԵՑ՝

1. Թույլատրել համայնքի ղեկավարին՝ համայնքային 2011 թ. բյուջեյում կատարել հետևյալ փոփոխությունը.

- պետության կողմից համայնքին պատվիրակված ծառայությունից /անասնաբուժական ծառայություն/ եկամուտը պակասացնել 240000 /երկու հարյուր քառասուն հազար/ դրամով, ճշտված պլանը սահմանել 360000 /երեք հարյուր վաթսուն հազար/ դրամ, ծախսային մասից պակասեցնել /նույն ծառայության/ 240000 /երկու հարյուր քառասուն հազար/ դրամ, և ճշտված պլանը սահմանել 360000 /երեք հարյուր վաթսուն հազար/ դրամ:

Ավագանու անդամներ՝

1. Առաքելյան Գասպար – կողմ
2. Առաքելյան Գևորգ - կողմ
3. Արզումանյան Ոսկան – կողմ
4. Բաղդասարյան Արթուր – կողմ
5. Խաչիկյան Վազգեն – կողմ
6. Հովհաննիսյան Մանվել - կողմ
7. Քեշիշյան Արամայիս – կողմ

Լուսառատ համայնքի ղեկավար՝ Դ. Հակոբյան

Համայնքի ղեկավարի աշխատակազմի ղեկավար՝ Գ. Սահակյան

Լուսառատ ... «04101071»